ՇՈՇ ԵՎ ՔԱՐԱԳԼՈՒԽ ՍՂՆԱԽՆԵՐԻ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Գ. Ա. ՉՈՒՐԱՆՅԱՆ

XVIII դարի առաջին քառորդում ազատագրական պայքարի ելած Արցախի հայ բնակչության համար լինելով հիմնական հավաքատեղիներից ու պաշտպանական ամրություններից մեկը, Շոշի (Շուշիի) բերդը մի քանի տասնամյակ անց դառնում է մահմեդական խանության կենտրոն և իր մեջ ընդունելով նաև օտարասեռ էթնիկ խումբ, վերածվում Արցախի հայ ազատագրական շարժման խափանման հիմնական հենակետի։ Շուշիի բերդ-ամրոցի հուշակը, սակայն, զգալի չափով ստվերել է այն կարևոր դերը, որ ազատագրական պայքարի տարիներին կատարել է Քարագլուխ ամրոցը և որի մասին եղած վկայությունները ևս պատմագիտական գրականության մեջ վերագրվել են Շուշիին ու ըստ այդմ՝ նույնացվել այդ երկու ամրությունները։

Պատմական սկզբնաղբյուրներում Շուշի գյուղի վաղագույն հիշատակությունը վերաբերում է 1422 թ.։ Շուշիում արտագրված Ավետարանի հիշատակարանում վկայված է. «...գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ յոգնամեղ և ապիկար դրչի տէր Մանուէլի ի թուականութեանս հայոց ՊՀԷ (1428) ի յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի գեղս Շուշու կոչեցեալ, ընդ հովանեաւ Աստուածածնիս ի կաթողիկոսութեան տէր Յոհանիսի...»[1]։ Շուշիում 1575 թ. Հովհաննես երեցի կողմից արտագրված Ավետարանի հիշատակարանի հաղորդման համաձայն ոչ միայն հաստատվում է Շուշիի գոյության փաստը, այլև ապացուցվում, որ Արցախը XVI դարի երկրորդ կեսին պատկանում էր Երևանի վիլայեթի կազմում[2]։ «Ի Փոսա նահանգ (Զուխուր-Սաադի կամ Երևանի նահանգ) գաւառս Վարընթոյ (Վարանդա), ի գաւղս որ կոչի Շուշոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսիս... և ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին»[3]։ Շուշի գյուղում երկու եկեղեցիների առկայությունը վկայում է նրա բազմամարդության մասին։ Գյուղում պահպանվել են 1458, 1651, 1655, 1712 թթ. հայերեն վիմագիր արձանագրություններ[4], որոնք վկայում են գյուղում կյանքի անընդհատության մասին։ Գյուղի հին գերեզմանատան տապանաքարերում (XIII—XVII դդ.) բազմիցս կրկնվում է «Շօշոյ» տեղանունը[5]։

Արձանագրելով Շուշի գյուղի արդեն իսկ XIII—XV դարերից հիշատակվելու փաստը, կարելի է ենթադրել, որ Շուշիի բերդը ևս, եթե ոչ գյուղին հասակակից, ապա դեթ շատ ավելի վաղ է գոյություն ունեցել, քան ընդուն-

---

1 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, աշխատասիրությամբ Լ. Ս. Խալիկյանի. մասն Ա, Երևան, 1955, էջ 384։

2 Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. հ. 2, Երևան, 1959, էջ 24, ծան. 2։

3 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4375, էջ 264ա։ Հմմտ. Ա. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 24։

4 Դիվան հայ վիմագրության, պրակ. 5, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1982, էջ 146։ Ե. Լալայան. Երկեր. հ. 2, Երևան, 1988, էջ 31։

5 Շ. Մ. Մկրտչյան. Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները. Երևան, 1980, էջ 146—147։ Նույնի՝ Историко-архитектурные памятники Нагорного Карабаха. Ереван, 1988, с. 175.

ված էր կարծել մինչև վերջերս[6]։ Շուշիի բերդի մասին գրավոր աղբյուրները վերաբերում են XVIII դարի սկզբին։ Ըստ այդմ, անվիճելի է, որ Շուշիի բերդը կար և բնակեցված էր մինչև Արցախում ազատագրական պատերազմների սկիզբը։ Այդ փաստը ստիպված արձանագրել են անգամ Շուշիի բերդը XVIII դարի կեսերին հիմնադրված լինելու տեսակետի մոլի կողմնակիցները[7]։ Հետագայում գալով Շուշի, օտար տիրապետողները տիրացել են նաև վաղուց արդեն կառուցված շենքերին։ Անշուշտ Շուշիի բերդն է նկատի առնվում «Շօշվայ քարրն» արտահայտությամբ հետևյալ վկայության մեջ. «Ավան ուզբաշին, որ եկավ Շօշվայ քարրն մտավ, սահիբ խուրուշ իլավ ՌՃԿ9 (1717)» և «Օսմանլուն, որ քարրն կալաւ, Ավան ուզբաշին փախավ քինաց»[8]։

Առանձին կարևորություն են ստանում Շօշ սղնախում (իմա՝ ամրությունում) գրված այլ վավերագրեր, որոնցով հաստատվում են վերոբերյալ վկայությունները ամրոցի գոյության ու նրա պատկանելության մասին։

1724 թ. հունվարի 4-ին Ավան և Միրզա հարյուրապետների կողմից «Շօշոյ սղնաղումն» գրված և ռուսական արքունիք հղված վավերագրում Արցախի Դիզակ և Վարանդա գավառների ժողովրդի անունից նշվում է. «Մենք, Հայոց երդրիս, որ է Դիզաքոյ և Վարանդայ երկրին, ուզբաշիքս և մենք մեր թամամիյ մեծօվ և փոքրօվ, վարդապետօվ և քահանայիւք, մելիքօվ և քոդխոդէքօվ, քէվխօվ և ըռաստիթօվ, թամամի մեր ասկարօվս, ենդրտ գրնալքս մեր կամաքն և մեր յօժարութեամբն ծառայ գրուցանք վերոյ գրեալ մեծին արքային...»[9]։

1724 թ. հունվարի 12-ին Ավան հարյուրապետի հրամանատարության ներքո գտնվող զորքի մասին նույն ինքը՝ Ավանը, վկայում է. «Մենք Շօշի սղնաղին ուզբաշիքս և մեր թաբուն թալեղօվս, որ հաշիր հարաղէ կանը, ես՝ ուզբաշի Ավանս, և ես՝ ուզբաշի Միրզես, մեր թաբուն թալեղօվս կանը ԵՃ (500) թվանկաւոր սահաթ եարաղ և էլ առանց եարաղ յաշիր էլ մարդ կայ ՁՌԴՃ (6400)... և էսչանք ժամանակ այ, որ մեր երկիրն պախէլ անք...»[10]։

1725 թ. դեկտեմբերի 17-ին Ռուսաստանի ռազմական կոլեգիայում հայոց սղնախների կողմից առաքված Ջելիբի քյոխվան վկայում է, թե իրենք գնացել են „к первому армянскому собранию, которое было с юзбашею Аваном при деревне Шоше"[11]։

1725 թ. դեկտեմբերի 19-ին ռուսական արքունիք հղած իր զեկուցագրում գեներալ Մատյուշկինը հայտնում է, որ «Ավան յուզբաշին, հավաքելով 10000 հոգի լավ զինված մարդիկ... մնացել է սղնախում և բերդ է կառուցում»[12]։ Այսպիսով վերոբերյալ փաստերը վկայում են, որ Շուշի բերդին տիրում էր Ավան հարյուրապետը և նա այնտեղ մեծ գործ է կատարել պաշտպանունակությունը ամրապնդելու ուղղությամբ։

Շուշի ամրոցի սկզբնավորման ու պատկանելության հարցին անդրադարձել է նաև ակադ. Ա. Գ. Հովհաննիսյանը։ Իր խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի ժողովածուի առաջաբանում ներկայացնելով հաստատում ընդ-

---

6 Չի փաստարկվում Լեոյի կարծիքը, թե բերդն է իր անունը տվել ղալին (Լ ե ո. Երկերի ժողովածու. հ. 3, մաս երկրորդ, Երևան, 1973, էջ 267, հմմտ. նույն տեղում, էջ 606, ծան. 31)։

7 Азербайджан (Исторические и достопримечательные места), под общей редакцией М. А. Казнева. Баку, 1960, с. 91.

8 Հ. Թ ո փ չ յ ա ն. Ցուցակ ձեռագրաց Դաղյան խաչիկ վարդապետի, հ. Ա, էջմիածին, 1898, էջ 35։ Հմմտ. Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Նշվ. աշխ., հ. 2, էջ 609։

9 Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов. Под ред. А. Г. Иоаннисяна. Т. II, ч. II, Ереван, 1967, с. 71.

10 Նույն տեղում, էջ 57։

11 Նույն տեղում, էջ 265։

12 Ա. Ա ր ա հ ա մ յ ա ն. Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից. Երևան, 1953, էջ 121։

գրրկված վավերագրերը, նա գրում է. «Իվան Կարապետի նամակներից մեկում հիշատակվում է. «Քարայգլխի նոր շինած զալումն»։ Մեկ այլ նամակում Իվան Կարապետը հաղորդում է, որ ինքը գտնվում է «Քարագլխի սըղնախումն» և հյուրընկալվում է Թարխան և Բաղի հարյուրապետների մոտ։ Ի հաստատումն նրա, որ այստեղ խոսքը հենց Շուշիի ամրոցի մասին է, որի հիման վրա հետագայում առաջացել է Շուշի քաղաքը, պետք է մատնացույց անել այն փաստը, որ այդ քար-ամրոցի ստորոտում է գտնվում հայկական «Քարին տակ» գյուղը (ադրբեջաներեն՝ «Դաշ-ալթը»)։ Իր անվանման մեջ այն պահպանել է ամրոցի հին անվան հետքերը՝ «Քար» կամ «Քարագլուխ»։ XVIII դարի 20-ական թթ. այդ ամրոցը սղնախցիների գլխավոր ամրություններից էր»[13]։

Ա. . Հովհաննիսյանի ենթադրությունը, թե Քարագլուխը նույն Շուշին է, ստացել է լայն քաղաքացիություն և այն փորձել են հիմնավորել կամ պարզապես կրկնել են հետագայի բոլոր ուսումնասիրողները[14]։ Նման նույնացման համար կռվաններից հիմնականը, այդպիսով, դարձել էր Իվան Կարապետի նամակներում հիշատակվող «Քարայգլխի նոր շինած զալումն» արտահայտությունը և Քարին տակ գյուղի առկայության հանգամանքը Շուշի բերդի մոտ։

Հիշյալ վավերագրերը, որտեղ Թարխան հարյուրապետը հիշատակվում է Քարագլխի բերդում, Իվան Կարապետի զեկուցագրերն են, որոնք, գրված լինելով Քարագլխի բերդում, ոչ մի կասկած չեն թողնում իրենց հավաստիության և իրազեկության առումով։ Առաջին վավերագրում (1724 թ. հուլիսի 18) Իվան Կարապետը նշում է, թե «էս Քարայգլխին սղնաղումն Թարխան և Բաղի ուղբաշոնց քշտին ամ»։ Երկրորդ վավերագրում, որ գրված է նույն թվականին, ուղղակի նշվում է. «Գրվեցավ Քարայգլխի նոր շինած զալումն»[15]։ Իվան Կարապետի այս նամակի բովանդակության հետ իրենց համաձայնությունը հավաստելու համար գրված են մի շարք անձնավորությունների կնիքներ, որոնց մեջ առաջին տեղում են Թարխան և Բաղի հարյուրապետների ու մելիք Գրիգորի կնիքները։ Նկատենք, որ կնիքների շարքում բացակայում են Ավան հարյուրապետի և այլոց կնիքները, որոնք այլուր հիշատակվում են որպես Շոշի սղնախի տիրակալներ։

Նշելի է նաև այն հանգամանքը, որ այլուր Թարխան հարյուրապետի «սղնախը» հիշատակվում է Խաչեն գավառում[16], այն դեպքում, երբ Ավան հարյուրապետի Շոշ գյուղի մոտ եղած սղնախը (Շուշի բերդը) Վարանդայի կազմում էր։ «Քարագլուխ» բերդ-սղնախի շփոթը Շոշի բերդի հետ տեղի չէր ունենա, եթե Պ. Հարությունյանի կողմից[17], որն առաջին անգամ նկատել էր այդ հանգամանքը, ճիշտ բացատրություն ստանար մի այլ վավերագիր ևս, որտեղ Թարխանը սակայն հիշատակվում է Շոշում և որը հարկ է այստեղ ավելի հանգամանորեն պարզաբանել հետագայում ևս թյուրիմացություններից խուսափելու համար։ Ահա այդ վավերաբիրը. «Մեք Շոշի եղեալ ուղբաշիքս, ես՝ Թարխանս, և ես՝ Բաղիս, և ես՝ Փանիս, և ես՝ Սարգիսս, և ես՝ Սադեդս մեր թաբուն թալեղովս և մեր քէվխայ քադխոդէքովս և Գանջոյ

---

13 Армяно-русские отношения..., т. II, ч. I, Ереван, 1964, с. XLII.

14 Մ. Ս. Սողոմոնյան. Արցախ-Ղարաբաղի պատմությունից.—«Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 1, էջ 139—145։ Հայկական սովետական հանրագիտարան. հ. 8, էջ 599։ Նույն տեղում, հ. 10, էջ 450։ Հայ ժողովրդի պատմություն. հ. 4, Երևան, 1972, էջ 151, 160։ Ռ. Հ. Տեր-Դավթյան. Շուշի, Երևան, 1993, էջ 33։ Շ. Մկրտչյան. նշվ. աշխ.։ Г. Б. Абрамян. К вопросу об армянстве Арцаха.—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1993, № 1, էջ 11։

15 Армяно-русские отношения..., т. II, ч. II, с. 186, 188.

16 Նույն տեղում, էջ 78։

17 «Тархан-юзбаши упоминается то как представитель Хачена, то как представитель сгнаха Шош» (Տե՛ս П. Т. Арутюнян. Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века. М., 1954, с. 228).

խայէրօվս, մեծօվ և փոքրօվ խնդրեցինք Իվան Կարապետէն, որ մեր կողմանէ Ա (1) գիր գրի Գանջայ մայալին քադխոդէքոնց վերէն, որ մեր միջումն բարըշութիւն ձգի, որ զմինոյ խետ բարըշացանի, որ մեք և գանջցիք բարիշ լինենք, մինչի մեր թագաւորըն գայ, մեզ հասանի։ Գրվեցաւ թիվն ՌՃՀԳ (1724) փեթրվարի ամսին ԻԲ (22)-ումն»[18]։

Ինչպես հայտնի է, մինչև 1724 թ. սկզբները գժտություններ, հակասություններ և թշնամանքի ու իրարամերժ գործողությունների փաստեր կային ոչ միայն Արցախի ազատագրական պայքարի ելած ուժերի, այլև Գանձակի մահմեդական բնակչության և Արցախի հայերի միջև։ Այդ հակասությունները պայմանավորված էին ինչպես իրենց աշխարհագրական դիրքով և օտար նվաճողներին դիմագրավելու ընթացքում առաջացած տակտիկական միջոցառումների տարբերությամբ, այնպես էլ այն հակասությամբ, որ կար եկվոր շիրվանցիների և տեղացի իշխողների միջև։ Այդ մասին վկայում է Իվան Կարապետը Ռուսաստան առաքած իր նամակներից մեկում. «Եւ մեք Ղափանայ եկինք, տեսինք, որ Եւայէ ախբէր Աբրայամն և Սարգիսն եկէլ ան քշերն ղօշունօվ մեծ սղնաղն կոխել ան և Թարխան ուզբաշին բռնէլ ան և շիրվանցոնց տնէրն թալանէլ ան... էն թարեղէն մինչ ի էս թարէղս Եսային ախբէր ղօշուն այ հավաքում, բերում Թարխանին վերայ կռիվ անում, յամէն գալոյ Բ-Գ (2—3) մարդ ուրն էն որ սպանման այ, փախման այ, յեդ այ էրթում և ճանապարհին ինչ հայի դեզ որ Թարխանին թաբէ այ, թալանում այ և տավարանին և ինչ օր ձեռն այ ընկաման, տանում այ։ Եւ մէյիֆ Բաղէրն ղօշուն այ ճավաֆէլ, Ավան ուզբաշուն ճետ այ կռիվ առում. նայ էլ Ավանին գեղարէնքըն այ չափմիշ անում. յամէն օր էստոնը մէչն կռիվ այ։

Եւ էս Շիրվանայ տղէքըն ան էս երկիրս Քորդի ձեռնէ ազատել և Շիրվանայ տղէքըն, Թարխան ուզբաշին ուզում չէ կռիվ առելն և մարդ կոտորելն. ասում այ, թէ հայ եան, ես գո՞ր կոտորէմ։ Եւ թէ ուզի Ա(1) օրումն կէկատորի։ Ասում այ Եսայէ, Սարգսին և Աբրայամին, թէ յամէն մարդ ուր բաժինին ղաբուլ առի նստի մինչի մեզ Ա(1) մեծաւոր գայ։ Եւ Եսային, Սարգիսն ղաբուլ չեն առում. գողի նման գալիս են դեղ չափմիշ անում. նայ էլ, մէլիքըն էլ փախման ան ուրէնց ղալէն. և մոնչ օվ իմ խօսկն լսում չեն և բարըշում չէն. էդպէս յամէն օր կռիվ այ»[19]։

Նման վիճակին վերջ տալու և ուժերը համախմբելու համար մեծ գործ են կատարում ինչպես Իվան Կարապետը, այնպես էլ Թարխան և Ավան հարյուրապետները[20]։ Նրանք փորձում են Շոշ հրավիրել հակամարտ ուժերի մի շարք ներկայացուցիչների և համաձայնություն ստանալ դադարեցնելու հակամարտությունը։

Վերոհիշյալ փաստաթուղթը կազմվել է նման հանդիպումներից մեկի ժամանակ՝ 1724 թ. փետրվարի 22-ին, երբ Շոշում հավաքված (վավերագրում՝ «եղեալ») Թարխան, Բաղի, Փանի, Սարգիս, Սադեղ հարյուրապետներն ու Գանձակի հայերի ներկայացուցիչները համատեղ լիազորել են Իվան Կարապետին իրենց անունից բանակցություններ վարելու Գանձակի մահմեդական իշխանությունների հետ՝ համագործակցության եզրեր մշակելու համար օսմանյան զորքերին դիմագրավելու գործում։ Այսպիսով, ինչպես վերոհիշյալ հարյուրապետները, այնպես էլ Գանձակի հայերի ներկայացուցիչները Շոշի սղնախում էին գտնվում համատեղ որոշում կայացնելու նպատակով և, ըստ այդմ էլ, այդ վավերագիրը չի կարող փաստարկ ծառայել նրանց այդ սղնախի տիրակալներ ճանաչելու և դրանով իսկ Շոշի և Քարագլխի սղնախների նույնացման համար։

Ավելին, վավերագրում հստակ տարբերակված է Թարխան հարյուրապետի սղնախը (Քարագլուխ), որի դեմ պատերազմում էին Աբրահամ և Սար-

[18] Армяно-русские отношения..., т. II, ч. II, с. 71.

[19] Նույն տեղում, էջ 187։

[20] П. Т. Арутюнян. Указ. соч., с. 243—247.

կիս մելիքները, և Ավան հարյուրապետի սղնախը (Շոշ կամ Քար), որը հարձակման էր ենթարկվում մելիք Բաղերի զորքի կողմից։

1726 թ. նոյեմբերի 15-ին ռուսական հրամանատարությանն ուղարկված Ավան և Ոհան հարյուրապետների նամակում ևս հստակորեն տարբերակված են հիշյալ սղնախները. «Այս է Ղարայպաղին խապարն. ՌՃՀԵ (1726) թվին նոյընբերի ԺԵ (15) էր, որ սարասկարն Շամախու եկաւ Պարդայ, Եսայի հողեոր տէրն բուլ Ղարայպաղի մէլիքներովն և քադխուդովն գնացին Պարդայ սարասկարին զանշար։ Սարասկարն վեր կալան եկին Շօշու՝ Ավան ուզպաշին և Ոյնան ուզպաշին դալէն վերայ։ Ը (8) օր կռիւ արին թօփով և զօբարով. Քարին մինչ ի կէսն կալան, էլ աւել չի կարացին գնալ։ Եւ շատ ուժով եսիր դարան Ղարայպաղան։

Էն ժամանակ, որ Իվան Կարայպետն թագաւորին ուքաղովն եկաւ Ղարայպաղ, շատ և շատ ձի և շատ ուժով ոչխար և շատ կով ժողովեալ էի թագաւորին զոշունին համար, սարասկարն որ եկաւ Քարին վերայ, ոխը և դարան։ Յետ նորայ, ՌՃ (800) մարդ կոտորվեց ևս ենկիչարի աղան, զրխչէվման ամէն սաաակեցաւ։ Սարասկարն յետ դառաւ ընաց Կանջայ։

Թարխան ուզպաշին, Սարմիս ուզպաշին, Աբբրյնամ ուզպաշին զալոցն վերայ էլ կոիվ չիլաւ, միայն Ավան ուզպաշին յետ կուվեց ու յետ դարցաւ սարասկարն, որ ընաց (և) Կանջայ նստեց»[21]։

Այսպիսով, կարծում ենք, կարելի է ապացուցված համարել, որ Թարխան հարյուրապետի Քարագլուխ և Ավան հարյուրապետի Շոշ կամ Քար սղնախները միանգամայն տարբեր ամրություններ են և նրանց նույնացումը արդարացված չէ։ Իվան Կարապետի նամակներում հիշատակված Քարագլուխ ամրոցը, մեր կարծիքով, կարելի է նույնացնել միայն Խաչեն գավառում գտնվող Քարագլուխ կամ Շիկաքար ամրոցի հետ[22]։ Այն վաղադույնս հիշատակվում է Մովսես Դասխուրանցու երկում. «Ի լնուլ ՄՀ (270+551=821) թուոյ հայոց ելին գալտաբար ի Պարտաւայ արք ընտիրք ի տաճկաց և յաւարի առին զԱմարաս գաւառ և դերի առեալ իբրև ոգիս հազարս և ի Մեծիրանց սահմանի ամրացեալք ի տեղւոջն, որ կոչի Շիկաքար...»[23]։ Քարագլուխ գյուղը հիշատակվում է նաև XVII դարի մի վավերագրում, որտեղ գյուղի ժողովրդի անունից հավաստվում է Քարագլխի պատկանելությունը Գանձասարի վանքին[24]։

Վերոբերյալ փաստերի հիման վրա ուղղելի է հետևապես նաև այն պընդումը, թե «Քարագլխի [իմա Շուշիի] անկումից հետո Ավան յուզբաշին իր տրամադրության տակ գտնված ուժերի մնացուկներով պատսպարվում է Թարխան յուզբաշուն ենթակա Դիզակի կենտրոնում՝ Տող բերդասարի լանջին կառուցված համանուն ավանում»[25]։

---

21 Армяно-русские отношения..., т. II, ч. II, с. 286.

22 Շիկաքար-Քարագլխի տեղադրության մասին տե՛ս Մ. Բարխուդարյան. Արցախ, Բաքու, 1895, էջ 197։ Շ. Մկրտչյան. Ճշվ. աշխ., էջ 138—139։ Մեկ այլ Քարագլուխ գյուղի տեղադրության մասին (Շամձորի հյուսիսում) տե՛ս Մ. Բարխուդարյան. Արցախ, էջ 64։ Մեկ այլ Քարագլուխ արձանագրված է Գյուլիստանի մոտ, տե՛ս նույն տեղում, էջ 241—242։

23 Մովսես Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի. Երևան 1983, էջ 326։

24 Հ. Թոփչյան. Ցուցակ ձեռագրաց Խ. վ. Դաղյան. մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 24։

25 Հայ ժողովրդի պատմություն. հ. 4, Երևան, 1972, էջ 160։